

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ծովինար Ալեքսանդրի Ադամյանի կողմից 20.04.2023թ. կնքված թիվ 1 պայմանագրի առաջին երկու ամիսների ընթացքում իրականացված աշխատանքի

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել են հետևյալ կանոնակարգող փաստաթղթերը.

1. ՀՀ քիմիական նյութերի մասին օրենքի նախագիծը, որը բավական մակերեսային է գրված և գրեթե չի արտացոլում միջազգային՝ ԵՄ և ԵԱՏՄ, նորմատիվ փաստաթղթերում ամրագրված առանցքային կետերը:


2. ԵԱՏՄ օրենսդրությունը քիմիական արտադրանքի վերաբերյալ՝ մասնավորապես «Քիմիական արտադրանքի անվտանգության մասին» ԵԱՏՄ ՏԿ 041/2017 նախագիծը: Ուսումնասիրության ընթացքում վեր են հանվել մի շարք հարցեր, որոնց պարզաբանումը, որոշ դեպքերում նաև միջգերատեսչային հարցումները հնարավորություն կտան ազգային օրենքի նախագիծը մշակել նաև ԵԱՏՄ ընդունված կանոնակարգին համապատասխան, առավել առարկայական և գործնականում կիրառելի: Այդ հարցերը հետևյալն են.

- Քիմիական նյութերի գրանցման ռեեստրը ՀՀ-ում: Ո՞ր մարմինն է նախատեսվում իբրև ռեեստրի վարող և տվյալ ուղղությամբ հանդիսանալու լիազորված մարմին (այս պահին ՇՄՆ-ն է հանդիսանում լիազորված մարմին):
- Քիմիական նյութերի գրանցման, համապատասխանության գնահատման և լաբորատոր փորձարկման գործառույթները ո՞ր մարմիններն են իրականացնելու:
- Քիմիական վտանգավոր նյութերի դասակարգման համար ընդունվում է, արդյո՞ք, ԵԱՏՄ տարբերակը: Այն է՝ մարդու, շրջակա միջավայրի, հողի, օդի, ջրի, օզոնային շերտի համար վտանգավոր նյութեր:

Նոր օրենքի նախագծի մշակման համար որպես առաջնային լուծման ուղղություններ նախանշված են հետևյալ հերթական փուլերը.

- ԵԱՏՄ օրենսդրական դաշտի ուսումնասիրության ամբողջացումը և ՀՀ օրենքի նախագծի հիմնական հոդվածների մշակումը:
- ԵՄ և միջազգային նորմատիվ փաստաթղթերի ուսումնասիրությունը, դրանցում առկա, սակայն ԵԱՏՄ օրենսդրական պահանջներում բացակայող հոդվածների վերհանումը և ըստ ՀՀ համար կարևորության ներառումը ՀՀ օրենքի նախագծի մեջ:

ՇՄՆ վտանգավոր նյութերի և
թափոնների քաղաքականության
վարչության փորձագետ՝
Ծովինար Ադամյան



12.06.2023թ.